ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/74

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.12.2017թ. թիվ 26-3/22564-17 գրությամբ «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ին (ՀՎՀՀ 82739453) (այսուհետ՝ նաև ԱՁ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 05.12.2017թ. թիվ ԱԿ/ԿԱ-1/11071-17 գրության հիման վրա, 18.01.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 05.12.2017թ. թիվ ԱԿ/ԿԱ-1/11071-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով 2017 թվականի նոյեմբերի 14-ին հայտարարված «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 29-ին կայացած հայտերի գնահատման նիստում ընդունված որոշմամբ «Սեդա Շբոյան Բաբկենի» Ա/Ձ-ի հայտը մերժվել է: «Սեդա Շբոյան Բաբկենի» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Սոնա Նավասարդյանը և Միքայել Կարապետյանը :

3. <u>«Սեդա Շբոյան Բաբկենի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սեդա Շբոյան Բաբկենի» Ա/Ձ-ն՝ 14.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ իր առարկություններն է հայտնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ: Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Գտնում ենք, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը ցուցակում ներառելու համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ն 21.11.2017թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ նաև՝ պատվիրատու) կողմից հայտարարված «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

«Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է՝ 1-ին չափաբաժնի համար՝ 1,180,000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ 665,000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2017թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ի հայտը կազմվել և ներկայացվել է ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, և վերջինս ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մանակից՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

Կարծում ենք, որ գնահատող հանձնաժողովը հիշյալ որոշումը կայացրել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի խախտմամբ: Մասնավորապես, ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով սահմանված՝ գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի 5-րդ հավելվածի համաձայն՝ գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ի բաղադրիչը մասնակիցը պարտավոր է լրացնել թվերով և տառերով՝ (0 (զրո)):

Նույն պահանջը սահմանված է նաև «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հավելված 5-ով:

Մինչդեռ Ընկերության կողմից Հավելված 5-ով նախատեսված գնային առաջարկի 4-րդ սյունակում գումարը չի լրացվել, ոչ տառերով, և ոչ էլ թվերով: Գտնում ենք, որ նշված հանգամանքը հիմք է Ընկերության գնային առաջարկը մերժելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ն գտնում է, որ ԱՁ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության խախտումներով, և վերոհիշյալ խախտմամբ իրականացված ընթացակարգի արդյունքում ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար բավարար հիմքեր առկա չեն, քանի որ եթե հանձնաժողովի կողմից պահպանվեին

ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ԱՁ-ի հայտը մերժելու արդյունքում, չէին կարող ի հայտ գալ Պատվիրատուի կողմից արձանագրված՝ ԱՁ-ին վերագրվող խախտումները»:

Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էր ԱՁ-ի լիազորված ներկայացուցիչ Ռուբեն Շբոյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/74 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.12.2017թ. թիվ 26-3/22564-17 գրությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 05.12.2017թ. թիվ ԱԿ/ԿԱ-1/11071-17 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.11.017թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 2, 29.11.2017թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3 և 01.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությունները, «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ի կողմից «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացրած հայտի պատճենը.

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար ախտորոշման նյութերի ձեռք բերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով գնանշման հարցման (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար:

ԱՁ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-

17/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 21.11.017թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 1.5 կետով արձանագրվել է, որ Ընթացակարգի շրջանակներում «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ի առաջարկած ընդհանուր գնային առաջարկները կազմել են համապատասխանաբար՝ 1-ին չափաբաժնի համար 1,180,000 ՀՀ դրամ և 2-րդ չափաբաժնի համար՝ 665,000 ՀՀ դրամ:

- 1.7.1 կետով որոշել է Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ին:

Նույն օրը Հանձնաժողովը Կոմիտեին ուղարկել է հարցում՝ խնդրելով տարամադրել «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ի՝ 21.11.2017թ. դրությամբ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ տեղեկատվություն:

Կոմիտեի կողմից 27.11.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 6,810 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 29.11.018թ. ժամը 17:00-ին նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 1-ին ենթակետով արձանագրել է, որ «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ն ունի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

Նույն կետի 2-րդ ենթակետով Հանձնաժողովը որոշել է «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով մերժել՝ վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար ախտորոշման նյութերի ձեռք բերման նպատակով հայտարարված «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ

հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:
- 5-րդ հավելվածով նախատեսված գնային առաջարկի 4-րդ սյունակում առաջարկվող գնի ԱԱՀ-ի բաղադրիչը մասնակցի կողմից լրացվում է թվերով և տառերով:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստին ԱՁ-ի ներկայացուցիչը Խորհրդին հայտնել է առարկություններ նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ: Ըստ վերջինիս, «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ին Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղն զբաղեցրած մանակից ճանաչելու Հանձնաժողովի որոշումը կայացվել է գնումների մասին ՀՀ

օրենսդրությամբ սահմանված պահանջների ակնհայտ խախտմամբ: Մասնավորապես, հրավերի 5-րդ հավելվածի՝ գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ի բաղադրիչը մասնակիցը պարտավոր էր լրացնել թվերով և տառերով՝ (0 (զրո)), ինչը ԱՁ-ի կողմից չի լրացվել՝ ոչ տառերով, և ոչ էլ թվերով: ԱՁ-ի ներկայացուցիչը հավելեց, որ հիշյալ հանգամանքը հիմք ընդունելով՝ Հանձնաժողովը պարտավոր էր մերժել Ընկերության գնային առաջարկը: Հաշվի առնելով վերը նշվածը՝ ԱՁ-ի ներկայացուցիչը եզրակացրեց, որ «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար բավարար հիմքեր առկա չեն, քանի որ եթե Հանձնաժողովի կողմից պահպանվեին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ապա Ընկերության հայտը վերջինիս կողմից կմերժվեր, ինչի արդյունքում ի հայտ չէր գա Ընկերությանը վերագրվող խախտումը՝ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 238-Ա հրամանով սահմանված՝ գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի 5-րդ հավելվածով նախատեսված գնային առաջարկի 4-րդ սյունակում առաջարկվող գնի ԱԱՀ-ի բաղադրիչը մասնակցի կողմից լրացվում է թվերով և տառերով:

Խորհուրդն արձանագրում է, որ «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 21.11.2017թ. դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով իր գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ ԱՁ-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ի բաղադրիչը լրացված չէ թվերով և տառերով:

Խորհուրդը գտնում է, որ ԱՁ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 238-Ա հրամանով սահմանված՝ գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի 5-րդ հավելվածով նախատեսված պահանջներին:

Խորհուրդը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ բավարար գնահատելով «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ի հայտը՝ գործել է ոչ իրավաչափ, և խախտել է Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, և Հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.12.2017թ. «Սեդա Շբոյան Բաբկենի» ԱՁ-ին (ՀՎՀՀ 82739453) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ